



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 10/16**

11.11.2016թ.

թ. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն),

քննարկելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՕ-239) 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Քաղաքացի Էմմա Մնացականի Վարդանյանը (ներկայացուցիչ՝ Գենյա Պետրոսյան, այսուհետ՝ Դիմող) 2016 թվականի հունիսի 9-ի դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել է որոշել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՕ-239) 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ, 60-րդ (1-ինից 4-րդ մասեր), 61-րդ հոդվածի (1-ին մաս), 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Դիմողի փաստարկները հանգում են հետևյալին.

Դիմողի դիրքորոշմամբ իր համար բացասական իրավական հետևանքներ են առաջացրել իր նկատմամբ կիրառված և դատական ակտերում անմիջականորեն վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, որոնք իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ, 60-րդ (1-ինից 4-րդ մասեր), 61-րդ հոդվածի (1-ին մաս), 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին:

Դիմողի պնդմամբ՝ << քաղաքացիական օրենսգրքով նախատեսված է ժառանգությունն ընդունելու երկու եղանակ՝ ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու և ժառանգված գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու միջոցով։ Ըստ դիմողի՝ << քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածով որևէ կերպ հստակեցված չէ ժառանգության իհմքը, որևէ վերապահում վերապահված չէ առ այն, թե արդյոք ըստ օրենքի, թե՛ ըստ կտակի ժառանգությանն են վերաբերում ժառանգությունն ընդունելու սահմանված եղանակները։ Սահմանադրության համապատասխան հոդվածներին համահունչ մեկնաբանությամբ՝ վիճարկվող դրույթը պետք է ենթադրի ժառանգության ընդունման նախատեսված երկու եղանակների կիրառումը բոլոր հիմքերով ժառանգության ընդունման, այդ թվում՝ ժառանգության պարտադիր բաժնի ընդունման դեպքում։ Մինչդեռ << քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթների անորոշ բովանդակությամբ պայմանավորված՝ դրանք իրավակիրառ պրակտիկայում դատարանների կողմից, դիմողի կարծիքով, կիրառվել են կամայականորեն։

Դիմողը գտնում է, որ << քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, դրանց իրավական անորոշությամբ պայմանավորված (առաջին հերթին ժառանգության ընդունման թվարկված երկու եղանակների՝ բոլոր հիմքերով ժառանգության ընդունման դեպքերում կիրառելի լինելու վերաբերյալ հստակեցման բացակայության հետևանքով), կիրառվել են այնպիսի մեկնաբանությամբ, որը հանգեցրել է անձի՝ << սահմանադրությամբ երաշխավորված սեփականության, այդ թվում՝ ժառանգման իրավունքի, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի, ինչպես նաև խտրականության արգելքի, օրենքի առջև հավասարության սահմանադրական սկզբունքների խախտմանը, որի արդյունքում անձը, որևէ իրավաչափ սահմանադրական նպատակի բացակայության պայմաններում, գրկվում է ժառանգության իր պարտադիր բաժնը փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ընդունելու հնարավորությունից։ Բացի այդ, վիճարկվող դրույթների կիրառման կապակցությամբ, ըստ դիմողի, առկա է հակասական իրավակիրառ պրակտիկա, ինչն ինքնին հանգեցնում է իրավական որոշակիության սկզբունքի խախտման։

Ենելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը ճանաչել << Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ, 60-րդ (1-ինից 4-րդ մասեր), 61-րդ հոդվածի (1-ին մաս), 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր։

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող քաղաքացիաիրավական նորմի բովանդակությունը հետևյալն է:

Հոդված 1226. Ժառանգությունն ընդունելու եղանակները

1. Ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր սպանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նորարին հանձնելով:

...

3. Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի գրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ուղնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կարգադրել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգապուի պարբերը կամ երրորդ անձանցից սպացել է ժառանգապուին հասանելիք գումարները:

Վիճարկվող քաղաքացիաիրավական նորմի սահմանադրականությունը պարզելու համար անհրաժեշտ է նախ բացահայտել ժառանգության ընդունման քաղաքացիաիրավական ինստիտուտի բովանդակությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգավորումներին համապատասխան:

Այսպես,

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի համաձայն
(Ժառանգության իմբրերը)**

1. Ժառանգությունը կարարվում է ըստ կրակի և ըստ օրենքի:

2. Ժառանգությունը կարարվում է ըստ օրենքի, եթե չկա կրակ, կամ դրանում սահմանված չէ ամրող ժառանգության ճակարագիրը, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերում:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1190-րդ հոդվածի՝

1. Ըստ կրակի և ըստ օրենքի ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգապուի կենդանության ժամանակ

սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիներ:

2. Ըստ կրտակի ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը գոյություն ունեցող իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները, ինչպես նաև օրարերկրյա պետություններն ու միջազգային կազմակերպությունները:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ և 1190-րդ հոդվածները գետեղված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ գլխում, որը վերտառված է՝ «Ընդհանուր դրույթներ ժառանգության մասին»:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1194-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. Պարբաղիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կրտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 73-րդ գլուխը կարգավորում է ժառանգությունն ընդունելու հետ կապված իրավահարաբերությունները՝ «Ժառանգությունն ընդունելը» վերտառությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝

Հոդված 1225. Ժառանգությունն ընդունելու կարգը

1. Ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:
2. Ժառանգությունը պայմանով կամ վերապահումներով ընդունել չի թույլափրկում:

3. Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որպես գպնվում:

4. Ժառանգության ընդունումը մեկ կամ մի քանի ժառանգների կողմից չի նշանակում դրա ընդունում մնացած ժառանգների կողմից:

5. Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկարմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

6. Ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելը հանգեցնում է նույն հեղևանքներին, ինչը ժառանգությունից իրաժարվելն առանց այն անձին նշելու, հօգուտ որի նա իրաժարվել է ժառանգությունից, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով:

7. Եթե ժառանգն օրենքով սահմանված կարգով սնանկ է ճանաչվել, ապա նրա կողմից ժառանգությունը ընդունելը չի համարվում ժառանգությունից հրաժարում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի համաձայն՝

Հոդված 1226. Ժառանգությունն ընդունելու եղանակները

1. Ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր սպանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նորարին հանձնելով:

2. Այն դեպքում, երբ ժառանգը դիմումը նորարին չի հանձնում անձամբ, ապա նման դիմումի դրակ ժառանգի սպորագրությունը պետք է վավերացնի նորարը կամ նորարական գործողություններ կարգարելու համար լիազորված պաշտոնակար անձը:

Ժառանգության ընդունումը ներկայացնուցի միջոցով հնարավոր է, եթե լիազորագրում հարուկ նախարեսված է այն ընդունելու լիազորությունը:

3. Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ուղնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կարգարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգապոտի պարզբերը կամ երրորդ անձանցից սպացել է ժառանգապոտին հասանելիք գումարները:

Այսպիսով, օրենսդիրը տարանջատում է ըստ կրակի և ըստ օրենքի ժառանգներին՝ վերջինների շարքում առանձնացնելով նաև ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգներին՝ անկախ կտակի բովանդակությունից:

Ընդ որում, ժառանգության ընդունման վերաբերյալ օրենսդիրը առանձնացրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 73-րդ գլուխը, որի դրույթները կիրառելի են ինչպես ըստ կտակի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ գլուխ), այնպես էլ ըստ օրենքի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլուխ) ժառանգության դեպքում:

Օրենսգիրքով տարանջատվում է ժանագությունն ընդունելու կարգ և եղանակ հասկացությունները: Ընդ որում, ըստ կարգի՝ ժառանգությունն ընդունելու համար ժառանգն այն պետք է ընդունի:

Իսկ ժառանգությունն ընդունելու եղանակների տեսանկյունից՝ օրենսդիրը սահմանում է երկու եղանակ՝

ա) ժառանգի կողմից ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու միջոցով, կամ

բ) ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետման կամ կառավարման միջոցով:

Ժառանգության ընդունման նշված եղանակները վերաբերում են երկու հիմքերին էլ՝ թե՛ ժառանգությանն ըստ կտակի, և թե՛ ժառանգությանն ըստ օրենքի: Այսինքն, և՛ ըստ կտակի, և՛ ըստ օրենքի ժառանգները (այդ թվում՝ պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգները) պետք է ընդունեն ժառանգությունը կամ ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելու միջոցով, կամ կառավարման միջոցով:

ա) Իրավական որոշակիության սահմանադրական սկզբունք

Կարծում ենք, իրավական որոշակիության տեսանկյունից վերոնշյալ կարգավորումները կասկած չեն հարուցում: Նշված քաղաքացիական դրույթներում հնարավորինս հստակ ձևակերպված են ժառանգության ընդունման կարգն ու եղանակները, որոնք վերաբերում են ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգությանը հավասարապես:

Այսպես, իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում, որի համաձայն՝¹

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեափերերն ի վիճակի լինեն դրսնորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմից անդրադարձել է լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, իամաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափի սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափի»:¹

Վերը նշված մեկնաբանություններից ելնելով, կարծում ենք, խնդրո առարկա օրենքում հստակ և որոշակի կերպով ձևակերպված են ժառանգության հիմքերը, ժառանգությունն ընդունելու կարգն ու եղանակները: Ուստի, Կենտրոնը գտնում է, որ վիճարկվող օրենքն ինքնին չի խախտում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը:

Ինչ վերաբերում է իրավակիրառ պրակտիկային, ապա հարկ է նկատել, որ անհատական սահմանադրական դիմումում նշված դատական ակտերի, այդ թվում՝ վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող նորմերը, մասնավորապես՝ վիճակվող քաղաքացիական իրավական 1226-րդ հոդվածը կիրառվում է դրա բուն իմաստին և նշանակությանը ոչ համապատասխան, հակասական մեկնաբանություններով և բովանդակությամբ, ինչը ՀՀ Սահմանադրության հետ համապատասխանության տեսանկյունից առաջացնում է իրավական որոշակիության, օրենքի առջև հավասարության և խտրականության արգելքի սկզբունքների, անձի սեփականության իրավունքի խախտման վտանգ:

Բանն այն է, որ դիմումում մեջբերված գործերով կայացված դատական ակտերով դատարաններն իբրև ժառանգության պարտադիր բաժնի ձեռքբերման եղանակ դիտել են ժառանգի կողմից ակտիվ գործողություններ կատարելը և

¹ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

Ժառանգության իրավունքի ծևակերպումը: Մինչդեռ, քննարկված քաղաքացիական կարգավորումներով ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգության ընդունման համար օրենսդիրը չի նախատեսել ժառանգության իրավունքը ծևակերպելու պարտադիր նախապայման այն դեպքում, երբ ժառանգը այդ թվում՝ պարտադիր բաժնի իրավունք ունեցող, փաստացի տիրապետում կամ կառավարում է ժառանգված գույքը՝ կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործողությունները կամ դրանցից որևէ մեկը: Նշված դրույթում ժառանգության իրավունքի ծևակերպումը որևէ կերպ նշված չէ կամ չի ենթադրվում որպես ժառանգության իրավունքի ընդունման եղանակ այն դեպքում, երբ ժառանգությունն ընդունվում է փաստացի տիրապետման կամ կառավարման հիմքով: Ուստի, դատարանների կողմից քննարկվող նորմին տրված մեկնաբանությունը չի բխում քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմի հմաստից և բուն բովանդակությունից, ինչն էլ իր հերթին հակասում է օրենքի առջև հավասարության, խտրականության արգելքի սկզբունքին և սեփականության իրավունքի սահմանադրական բովանդակությանը:

բ) Խտրականության արգելքի սկզբունք

Անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող քաղաքացիական 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի իրավակիրառական պրակտիկայի բովանդակության սահմանադրականությունն անհրաժեշտ է ստուգել օրենքի առջև հավասարության և խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքին համապատասխանության համատեքստում՝ պարզելու համար ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգների, այդ թվում՝ պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների համար ժառանգության ընդունման տարբեր եղանակներ սահմանելու սահմանադրականությունը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածների համաձայն՝

Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեղից, ուսայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գեներիկական հավկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային

փոքրամասնությանը պարկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, բարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Նշված սահմանադրական նորմերն ամրագրում են օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքի բովանդակությունը, որը նշանակում է՝ «միևնույն կատեգորիայի» անձանց նկատմամբ տարբերությունների բացառում և «հավասար պայմանների առկայության դեպքում մարդկանց հավասար վիճակ»:¹

Ենդու առարկա դրույթի իրավակիրառական պրակտիկայում տարբերակումը ժառանգության ընդունման հիմքերն են՝ ըստ կտակի և ըստ օրենքի, և այդ հիմքով ժառանգ հանդիսացող անձանց, այդ թվում՝ ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձանց տարանջատումը: Այսինքն՝ իրավակիրառական պրակտիկայում, նախ, ի տարբերություն ըստ օրենքի ժառանգների, ըստ կտակի ժառանգները և ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձինք կարող են ժառանգությունն ընդունել միայն ժառանգության իրավունքի ձևակերպմամբ (ժառանգված գույքի փաստացի տիրապետման կամ կառավարման փոխարեն) այն դեպքում, եթե, ինչպես արդեն քննարկել ենք, օրենսդրորեն անկախ ժառագնության հիմքերից, ժառանգության ընդունման եղանակները միասնական են ժառանգության բոլոր հիմքերի համար: Ուստի, իրավակիրառական պրակտիկայում նման տարանջատումը չի հիմնավորվում որևէ սահմանադրախրավական հիմքի և իրավաչափ նպատակի առկայությամբ: Այս իմաստով, այն խնդրահարույց է օրենքի առջև հավասարության և խտրականության արգելքի սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

գ) Սեփականության սահմանադրական իրավունք

Սույն գործով վեճի առարկա իրավադրույթները քննության առարկա պետք է դարձվեն նաև սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական մոտեցումների տեսանկյունից:

Հոդված 60. Սեփականության իրավունքը

¹ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջ 174-175:

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ծեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ պիրապետելու, օգտագործելու և փնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող գրկվել սեփականությունից, բացառությամբ դադարական կարգով օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օգտագործման իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով միայն նախնական և համարժեք փոխհարուցմամբ:

...

Սեփականության իրավունքի տարրերը հանդիսացող տիրապետման, օգտագործման, տնօրինման քաղաքացիական իրավագորությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, համաձայն որի՝

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Այլ կերպ կարելի է ասել, որ տնօրինման իրավունքը սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու հնարավորությունն է:

Սեփականության իրավունքի սահմանադրափական բովանդակությանն իր մի շարք որոշումներում անդադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես, իր 18.03.2008թ. թիվ ՍԴՈ-741 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1.

հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գոյքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

2008թ. մարտի 18-ի թիվ ՍԴՈ-741 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նաև նշել է. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ արձանագրել է. «Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավագորությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը**: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն»:

«Տնօրինման իրավագորությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում ու կարգով գույքի նկատմամբ գործողություններ կատարելու կամ վերջինից ձեռնպահ մնալու միջոցով իր

գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու իրավունք: Դա ոչ այլ ինչ է, քան հայեցողություն կամ, այլ կերպ՝ գույքի ճակատագրի հանդեպ «Հահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում նախանշված շրջանակներում և օրենքով սահմանված պայմաններում ու կարգով **ինքնավար կամք որսևորելու իրավունք**: Սակայն այդ կամքի ինքնավարությունը չի կարող անսահման լինել և չի կարող հակասել օրենքին, խախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը»¹:

Վերը շարադրված վերլուծություններից ելնելով՝ Կենտրոնի դիրքորոշմամբ «Հաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը խախտում է անձի ժառանգման և սեփականության իրավունքը՝ զրկելով դրա բաղադրատարեր հանդիսացող տիրապետման, օգտագործման և հատկապես տնօրինման իրավազորություններից, քանի որ նշված հոդվածի կիրառման ուժով գույքի ժառանգը զրկվում է ժառանգությունում իրեն հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքից: Նշված նորմի՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը միջամտում է անձի սեփականության գույքային իրավունքի իրականացմանը, խաթարում վերջինիս սեփականության անձեռնմխելիությունը: Ուստի, վիճարկվող նորմի՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը սահմանադրականության տեսանկյունից վիճարկելի է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ

- «Հաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը համապատասխանում են «Հահմանադրությանը»:

- «Հաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը «Հահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է»:

Կենտրոնի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

¹ «Հահմանադրական դատարանի 24.02.2012թ. թիվ ՍԴՌ-1009 որոշում: